

**Եվրոպական խորհրդի նախագահ
Հերման վան Ռոմպոյի բացման ուղերձը
“Հայաստանը Եվրոպայում” Քաղաքացիական հասարակության
ընթացքում**

Ինձ համար հաճելի է այսօր գտնվել Երևանում և ներկա լինել այս միջոցառմանը: Անհամբերությամբ սպասում եմ ձեզ լսելուն և ձեզ հետ կարծիքներ փոխանակելուն:

Ուրախ եմ, որ “Հայաստանը Եվրոպայում” թեման արժանանում է Հայաստանի հասարակական կազմակերպությունների նմանօրինակ ուշադրությանը: Այսօր միայն մի ուղերձ ունեմ հղելու ձեզ. Եվրոպային Հայաստանի մերձեցման համատեղ ծրագիրը իր ողջ ներուժով կգործի միայն այն դեպքում, եթե քաղաքացիները գիտակցեն և սատարեն այդ գործընթացին: Եվ այստեղ չափազանց կարևոր դեր ունեք դուք:

Առաջին, երկու խոսք այն մասին` ինչպես եմ ես տեսնում զարգացումները Հայաստանում, ինչը նաև քննարկելու եմ նախագահ Սարգսյանի հետ այսօր:

Ողջունելի է Հայաստանի հանձնառությունը իրականացնելու բարեփոխումներ, որոնք խարխիսված են Եվրոպական միության հիմնարար արժեքների վրա և ուղված են ԵՄ չափանիշներին ու նորմերին մոտարկվմանը: Ակնհայտ է, որ սա Հայաստանի ռազմավարական ընտրությունն է:

Ես խրախուսելու եմ նախագահ Սարգսյանին և ձեր խորհրդարանականներին թույլ տալ, որ Հայաստանը շարունակի ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ուղին, խթանել թափանցիկությունը, արմատախիլ անել կոռուպցիան և հարգել մարդու իրավունքները, օրենքի գերակայությունը, ներառյալ խոսքի և մամուլի ազատության իրավունքները: Հայաստանը ճիշտ ուղու վրա է, չնայած որ դեռ շատ անելիքներ կան:

Կառանձնացնելի նաև, որ Եվրոպական միությունը պատրաստ է աջակցել Հայաստանին: Որքան մեծ է իրական բարեփոխումներ իրականացնելու պատրաստակամությունը, այնքան շատ դուք կարող եք ապավինել Եվրամիությանը:

Այս համատեքստում Եվրոպական միությունը ողջունում է հայկական իշխանությունների ջանքերը ավելի մրցունակ և թափանցիկ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու ուղղությամբ: Մա կարևոր քայլ էր դեպի առաջ, չնայած դեռ կան խնդիրներ, որոնք պետք է

լուծվեն ինչպես նշված է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության եզրափակիչ զեկույցում: Վստահ ենք, որ այս խնդիրները իրենց լուծումները կգտնեն մինչև գալիք նախագահական ընտրությունները:

Որն է քաղաքացիական հասարակության դերը այստեղ? Ես կարող եմ միայն շեշտադրել այն կարևոր դերը, որը դուք որպես ուժ ունեք բարեփոխումային գործընթացում:

Թույլ տվեք առանձնացնել երեք հիմնական ոլորտներ, որոնք սերտորեն շաղկապված են և որոնցում ձեր դերն էական է նաև, երբ խոսքը վերաբերում է Հայաստան-ԵՄ հարաբերություններին՝ բարեփոխումների առաջընթացի մոնիտորինգին, պատասխանատվության խրախուսմանը և փորձաքննության ուժեղացմանը:

Առաջին, թույլ տվեք սկսել բարեփոխումների առաջընթացի մոնիտորինգից. Հայաստանի և ԵՄ-ի հարաբերությունների հիմքում ընկած են համատեղ նպատակները և հանձնառությունները: Մենք մեծապես կախված ենք քաղաքացիական հասարակությունից, որ պետք է արձանագրի այս օրակարգերի՝ կամ մարդու իրավունքների, կամ մամուլի ազատության, կամ բարձրագույն կրթության բարեփոխումների կամ այլ ոլորտների առաջընթացները:

Մենք չպետք է մոռանանք, որ այս ներդրումները ներառում են տնտեսական ինչպես նաև քաղաքական տիրույթները. ձեր աշխատանքը չաձազանց կարևոր է բիզնեսի և ներդրումային միջվայրի կամ հարկային համակարգի մասին մեր ըմբռնման համար: Յուրաքնչյուր տարի ձեր ջանքերը համալրում են մեր զարգացման զեկույցները:

Երկրորդ կետը, ես կցանկանայի ընդգծել՝ հաշվետվողականության խրախուսումն է, այսինքն՝ սա նշանակում է քաղաքացիների համար լինել ձայն և տեղեկացնել նրանց, մասնավորապես այն խմբերին, որոնք մեկուսացված կամ թույլ են ներկայացված քաղաքացիական բանավեճում: Թույլ տվեք մի օրինակ բերել. փոքրամասնությունների բոլոր իրավունքների նկատմամբ հարգանքն ապահովելու համար, մեզ հարկավոր է հաստատել ուղիղ հաղորդակցություն հենց փոքրամասնությունների հետ այնպիսի վստահելի և հուսալի ներկայացուցիչների միջոցով, ովքեր կարող են բարձրաձայնել իրենց սոցիալական, քաղաքական եւ տնտեսական կարիքները:

Տիկնա՛յք և պարոնա՛յք,

Երրորդը վերաբերվում է փորձաքննության զարգացմանը: Մենք հաստատում ենք երկխոսություն, աջակցում ենք բարեփոխումներին և տրամադրում ենք ֆինանսական և տեխնիկական աջակցություն տարբեր

ուղղություններով՝ սկսած բնապահպանությունից մինչև գյուղատնտեսություն և հանրային առողջություն:

Հաջողության հասնելու համար մեզ հարկավոր է մշտական խորհրդատվություն այստեղ՝ Հայաստանում օրենսդրության և ինստիտուտների, եվրոպական նորմերին եւ չափանիշներին նրանց համապատասխանեցնելու մարտահրավերների վերաբերյալ, և այն անհանգստությունների ու մտահոգությունների վերաբերյալ, որ քաղաքացիները կարող են ունենալ: Այս փորձաքննության մեծ մասը իրականացվում է բնապահպանական կազմակերպություններում, հիվանդների կազմակերպություններում, լրատվամիջոցների մոնիտորինգային մարմիններում և այլն, և մեզ դրանք պետք են, եթե մեր համագործակցության առաջնահերթությունները պետք է լինեն իրատեսական և ուղված քաղաքացիների կարիքներին:

Տիկնա՛յք և պարոնա՛յք,

Բազում պատճառների թվում սրանք են այն երեք կարևոր կետերը, թե ինչու է քաղաքացիական հասարակությունը կարևոր մեզ համար. Մենք մեծ ակնկալիքներ ունենք ձեզանից, իսկ որպես պատասխան դուք կարող եք ակնկալել մեզանից ճանաչում և աջակցություն:

Թույլ տվեք նախ անդրադառնալ ճանաչմանը. Որպես մեր Արևելյան Գործընկերության մաս, ի սկզբանե Եվրոպական Միությունը իր մոտեցման շրջանակներում նպատակ է ունեցել կառավարությունից զատ, կապ հաստատել քաղաքացիական հասարակության, ազգային խորհրդարանների, տարածաշրջանային և տեղական իշխանությունների հետ: Քաղաքացիական հասարակության ֆորումը ստեղծվել է, և նրա հիմնական նպատակներն են աջակցել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, նպաստել նրանց միջև շփումների խթանմանը, օգնել իշխանությունների հետ նրանց երկխոսությանը:

2009թ իր հիմնադրումից ի վեր, ֆորումը դարձել է Արևելյան Գործընկերության անբաժանելի մասը՝ նպաստելով ողջ տարածաշրջանում պարտավորությունների վերածմանը կոնկրետ արդյունքների:

Ճանաչումը կարևոր է նաև այստեղ՝ Հայաստանում: Ուրախ եմ, որ մի քանի հանդիպումներ են տեղի ունեցել Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի և կառավարության ներկայացուցիչների միջև: Մենք պետք է կառուցենք այս հիմքի վրա, որպեսզի հասնենք համակարգային և շարունակական երկխոսության. սա է ֆորմալից դեպի էականը զարգացման միակ ճանապարհը:

Կառավարության կողմից ճանաչումն, իհարկե, նույնպես շատ կարևոր է, ինչպես նաև կարևոր է քաղաքացիական հասարակության անկախության նկատմամբ հարգանքը, երբ այն բարձրաձայնում է անհարմար կամ անցանկալի խնդիրներ:

Ես նաև նշեցի քաղաքացիական հասարակության մեզանից աջակցություն ակնկալելու իրավունքը: Մենք կշարունակենք ֆինանսական օգնություն տրամադրել անմիջականորեն քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, բոլոր այն ոլորտներում, որտեղ մենք ներգրավված ենք:

Քանի որ մոտենում է ելույթի ավարտը, թույլ տվեք ընդգծել քաղաքացիական հասարակության կենսական դերը իրական բարեփոխումների և ժողովրդավարացմանը հասնելու գործում: Որքան մեծ է քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը, այնքան ավելի ուժեղ կլինի ժողովրդավարությունը քաղաքական բազմակարծության և ստուգումների ու հաշվեկշիռների հուսալի համակարգի առումով:

Տիկնա՛յք և պարոնա՛յք,

Խորհրդարանին ուղղված իմ ուղերձում, հիմնական հաղորդագրություններից մեկը լինելու է այն, որ Հայաստանի հսկայական ներուժի կայացումը, այդ թվում, ԵՄ – ի հետ քաղաքական ասոցացումը, կախված է միջնաժամկետ և երկարաժամկետ կայունության կանխատեսելիությունից: Դրան կարելի է հասնել միայն հակամարտության վտանգի վերացմամբ, ինչպես նաև նախկին հակամարտության հետևանքները լուծելու միջոցով: Այստեղ նույնպես քաղաքացիական հասարակությունը կարևոր դեր ունի՝ խրախուսելու և նպաստելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը:

հաճախ ստանում են միևնույն գնահատումը. Լեռնային Ղարաբաղի խաղաղության գործընթացի հանրային ընկալումը, ակնկալիքներն ու վախերը չեն համընկնում բանակցությունների սեղանի շուրջ նստած քաղաքական առաջնորդների փոխգործակցության հետ:

Առանց հակամարտությունից տուժած հասարակությունների՝ խաղաղության գործընթացում լիարժեք ներգրավման բանակցությունների այս փուլը կարող է ձախողվել՝ լուրջ ազդեցություն ունենալով տարածաշրջանում երկարաժամկետ կայունության վրա:

Տիկնա՛յք եւ պարոնա՛յք,

Եզրափակելով խոսքս թույլ տվեք ասել, որ դուք կարևոր դեր ունեք Հայաստանում բարեփոխումների իրականացման և խաղաղության

գործընթացներում: Հուսով եմ՝ իմ ներկայությունն այսօր և այստեղ, ցույց է տալիս, որ ԵՄ ամենաբարձր մակարդակում մենք ապավինում ենք ձեզ և մենք ձեզ ենք դիմում աջակցության ակնկալիքով: Ձեր աջակցությունը բոլոր ոլորտներում կարող է էական փափիություն հանգեցնել, մասնավորապես պարտավորությունների և արդյունքների մոնիտորինգի գործում: Մենք ապավինում ենք ձեզ ապահովել մեր առաջիկա երկկողմ համաձայնագրի համապատասխանությունը ամենաբարձր չափանիշներին. Դրա հաջողությունը մեծապես կախված է նաև Ձեր մասնակցությունից: